Արձանագրություն N 2
ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

«24» Մարտի 2022թ.
ժ. 10:00

ք. Երևան

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովը նախագահող՝ Գալուստ Գալստյանը.
Անդամ՝ Զավեն Աղաջանյանը.
Քարտուղար՝ Արթուր Բաղալյանը:
Գնահատող հանձնաժողովի նախագահ Ալինա Ավետիսյանը բացակայում էր նիստից:

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը	Տվյալները
«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 00112776, հասցե՝ ք. Երևան, Աճառյան 33/4, հեռ.: (011) 80-00-00 (215)
«Բի Լայն» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 02522096, հասցե՝ ք. Երևան, Խանջյան 50, հեռ.: (010) 57-88-25
«ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ	ՀՎՀՀ՝ 01031283, հասցե՝ ք. Երևան, Նանսենի 6 շ, հեռ.: (055) 755-455

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0

2. Էլեկտրոնային աճուրդին ներկայացված հայտերի մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների նախահաշվային գները՝ մեկ թվով արտահայտված, ինչպես նաև հայտ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Գնվելիք ապրանքի		Հայտ ներկայացրած մասնակցի		
	անվանումը	Նախահաշվային գինը /ՀՀ դրամ/	անվանումը	գնային առաջարկը (առանց ԱԱՀ)	գնային առաջարկը (ներառյալ ԱԱՀ)
1	Համակարգիչ ամբողջը մեկում	100,040,000	«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ	74,999,000	89,998,800
			«Բի Լայն» ՍՊԸ	77,982,400	93,578,880
			«ԽԱՉՄԻՔ» ՍՊԸ	120,000,000	144,000,000

3. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

«ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները՝

1. Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում նշված չէ առաջարկվող համակարգչի պրոցեսորի մոդելը, ուստի հնարավոր չէ պարզել նրա համարժեքությունը «Intel Core i3»-ի հետ,

2. Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ համակարգիչը պետք է ունենա 802.11ac 2x2 with Bluetooth M.2 տեխնիկական ցուցանիշը, սակայն մասնակցի կողմից հայտով առաջարկվել է 802.11b/g/n 2x2 with Bluetooth 4.2 տեխնիկական ցուցանիշը, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին,

3. Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է 6 հատ USB պորտ (1 x combo jack բարձրախոսի և խոսափողի համար (for headphones and microphone), 1 HDMI պորտ. (2x Type-A Hi-Speed USB 480Mbps signaling rate ports; 2x Type-A SuperSpeed USB 5Gbps signaling rate ports, 1x HDMI 1.4, 1xMicrophone/Headphone Combo Jack): Հարկավոր է հստակեցնել առաջարկվող ապրանքի մեջ տեղադրված պորտերի քանակները և տեսակները,

4. Հստակ չի ներկայացված առաջարկվող ապրանքի մակնիշը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի մակնիշը, իր նույնականացման դասիչով, որպեսզի հնարավոր լինի առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված տեխնիկական ցուցանիշները համեմատել հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրի հետ,

5. Մասնակցի կողմից մրցույթին մասնակցելու հայտով չի ներկայացվել հայտի ապահովման երաշխիքի պատճենը, սակայն աճուրդն ամփոփվելու օրը մասնակիցը հայտի ապահովման երաշխիքի բնօրինակը ներկայացրել է պատշաճ կարգով:

Ընդունվել է որոշում՝

Կողմ - 2, դեմ՝ – 0

4. Գնահատող հանձնաժողովի որոշման մասին

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Մեկ աշխատանքային օրով կասեցնել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը,

2. Առաջարկել «ԷԼՄԱՐԿԵՏ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի մարտի 28-ին ժամը 11:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացի 3 հասցեում:

4. Սույն որոշման հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-22/005 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղալյանին.

Ընդունվել է որոշում.

Կողմ՝ 2, դեմ՝ 0

Գնահատող հանձնաժողովը

Նախագահող՝ _____ Գ. Գալստյան

գնահատող անդամ՝ _____ Զ. Աղաջանյան

քարտուղար՝ _____ Ա. Բաղալյան